ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 235-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.11.2023ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 305-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.14159ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ 534ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն, 29.04.2021թվականի թիվ 698-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումները, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 20.05.2022թվականի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայոց ձոր-1, Վայոց ձոր-2, Վայոց ձոր-3, Վայոց ձոր-4, Վայոց ձոր-5, Վայոց ձոր-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին>> թիվ 122-Ա որոշումը, Արենի համայնքի ավագանու 17.03.2022թվականի <<ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված գոտեվորման նախագիծը հաստատելու մասին>> թիվ 26-Ն որոշումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 15.11.2023թվականի թիվ 305-Ա որոշումը:
2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,14159հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10006-0067-0001, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր

օգտագործման) գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0.14159հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասում առկա 534քմ մակերեսով շինությունը (անգար) ճանաչել օրինական,
4. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեում: Հաշվառման կոդ՝ 2023JMYZVZ
5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված կառույցն իրականացրած անձն անհայտ է և կառուցը որևէ անձի կողմից չի շահագործվում, կառույցը և առանձնացված 0.14159հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0067-0001, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) տնօրինել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43.1 կետը,
6. Վերը նշված հողամասին և շինությանը տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 3-րդ փողոց 48 շինություն:
7. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**